



ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
**ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ**  
**ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**

**Հաստատվել է՝**

ԵՊԲՀ Գիտական խորհրդի 03.06.2013  
թվականի թիվ 11 որոշմամբ,  
Գիտական խորհրդի 28.06.2023 թվականի  
թիվ 23-06-09-03 որոշմամբ  
հաստատվել է նոր խմբագրությամբ

**Ռեկտոր Ա.Ա.Մուրադյան**

**Հոդված 1. Ընդհանուր դրույթներ**

1. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) «Անվանական կրթաթոշակների մասին» կանոնակարգով կարգավորվում են Համալսարանի ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման կարգը և դրանց հետ կապված այլ կանոններ:

2. Ուսանողների անվանական կրթաթոշակները տրամադրվում են ուսման ընթացքում ուսանողներին առաջադիմության ու կարգապահության ուղղությամբ մոտիվացնելու, խրախուսելու նպատակով՝ սույն կանոնակարգով սահմանված պահանջներին բավարարելու պայմանով:

3. Համալսարանում սահմանվում են հետևյալ անվանական կրթաթոշակները, ըստ հատկացման քանակի՝

1) «**ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ**» անվան կրթաթոշակ՝ 5 ուսանողի համար, որից 3-ը՝ ընդհանուր բժշկության և ռազմաբժշկական ֆակուլտետներից, 1-ը՝ ստոմատոլոգիական ֆակուլտետից, 1-ը՝ դեղագիտական ֆակուլտետից,

2) «**ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆՈՒ**» անվան կրթաթոշակ՝ 1 ուսանողի համար՝ ընդհանուր բժշկության ֆակուլտետից,

3) «ՀԱԿՈՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ» անվան կրթաթոշակ՝ 1 ուսանողի համար՝ դեղագիտական ֆակուլտետից,

4) «ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ» անվան կրթաթոշակ՝ 1 ուսանողի համար՝ ընդհանուր բժշկության ֆակուլտետից,

5) «ԳՐԻԳՈՐ ԱՐԵՇՅԱՆԻ» անվան կրթաթոշակ՝ 1 ուսանողի համար՝ ընդհանուր բժշկության ֆակուլտետից,

6) «ՈՌԻԲԵՆ ՅՈԼՅԱՆԻ» անվան կրթաթոշակ՝ 1 ուսանողի համար՝ ստոմատոլոգիական ֆակուլտետից,

7) «ԲԱՐԴՈՒՂԻԵՄՈՍ ՖԱՆԱՐՋՅԱՆԻ» անվան կրթաթոշակ՝ 1 ուսանողի համար՝ ընդհանուր բժշկության ֆակուլտետից,

8) «ԼԵՎՈՆ ՕՐԲԵԼՈՒ» անվան կրթաթոշակ՝ 1 կուրսանտի համար՝ ռազմաբժշկական ֆակուլտետից,

9) «ՄԵՐՈՒԺԱՆ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ» անվան կրթաթոշակ՝ 1 կուրսանտի համար՝ ռազմաբժշկական ֆակուլտետից:

4. Սույն հոդվածով սահմանված պահանջներին բավարարող ուսանողների բացակայության դեպքում՝ անվանական կրթաթոշակները տվյալ ուսումնական տարում չեն տրամադրվում:

## ***Հոդված 2. Անվանական կրթաթոշակների տրամադրմանը ներկայացվող պահանջները***

1. Համալսարանի ֆակուլտետների դեկանատները յուրաքանչյուր տարի մայիս ամսին, նախորդ ուսումնական տարվա տվյալների (արդյունքների) հիման վրա իրականացնում է անվանական կրթաթոշակի հավակնորդ ուսանողների տվյալների ամփոփում:

2. Տվյալները ամփոփելիս հաշվի են առնվում հետևյալ պարտադիր պահանջները.

1) «Մխիթար Հերացու» անվան կրթաթոշակին կարող են հավակնել միայն գերազանց (9 և 10 գնահատականների միջին թվաբանականը՝ հարյուրերորդական ճշտությամբ) առաջադիմությամբ ուսանողները,

2) «Վահան Արծրունու», «Հակոբ Հովհաննիսյանի», «Լևոն Հովհաննիսյանի», «Գրիգոր Արեշյանի», «Ռուբեն Յոլյանի», «Բարդուղիեմոս Ֆանարջյանի», «Լևոն

Օրբելու» անվանական կրթաթոշակներին կարող են հավակնել բարձր՝ լավ (7-ից 8) և գերազանց գնահատականներով (գնահատականների միջին թվաբանականը՝ հարյուրերորդական ճշտությամբ) առաջադիմությամբ ուսանողները: Լավ գնահատականների քանակը չպետք է գերազանցի երեքը:

3) «Մերուժան Ստեփանյանի» անվանական կրթաթոշակին կարող է հավակնել ռազմաթշկական ոլորտի զինծառայողների, արցախյան պատերազմի մասնակիցների և նրանց հավասարեցված անձանց նկատմամբ առանձնակի հոգատարություն ցուցաբերած Ռազմաթշկական ֆակուլտետի առավել բարձր առաջադիմություն ունեցող կուրսանտը:

4) ուսանողը նախորդ ուսումնական տարվա արդյունքներով կարգապահական տույժի ենթարկված չպետք է լինի:

3. Սույն հոդվածի 2-րդ մասի պահանջներին բավարարող ուսանողները ֆակուլտետի դեկանատների կողմից տեղեկացվում են՝ անվանական կրթաթոշակի պարտադիր պահանջների առկայության մասին:

4. Անվանական կրթաթոշակի հավակնորդը կարող է գրավոր հրաժարվել կրթաթոշակ ստանալուց:

5. Սույն հոդվածի 2-րդ կետի 1-ին և 2-րդ կետերով սահմանված պարտադիր պահանջների հետ միասին հաշվի են առնվում հետևյալ լրացուցիչ միավորները, որոնք գումարվում են առաջադիմության միավորին՝

1) Հայաստանյան գիտական պարբերականներում տպագրված յուրաքանչյուր գիտահետազոտական հոդված՝ 0,5 միավոր, միջազգային պարբերականներում՝ 1 միավոր (առկայության դեպքում),

2) Միջազգային գիտական պարբերականներում տպագրված յուրաքանչյուր գիտահետազոտական հոդված՝ 1 միավոր (առկայության դեպքում),

3) Համալսարանում անցկացվող օտար լեզվի քննության արդյունքում՝ 5-ից 6 գնահատականների դեպքում՝ 0,1 միավոր, 7-ից 8 գնահատականների դեպքում՝ 0,5 միավոր, 9-ից 10 գնահատականների դեպքում՝ 1 միավոր,

4) ուսանողի կուրսի երաշխավորություն, որը տրվում է հետևյալ կարգով՝  
ա. երաշխավորությունը տրվում է կուրսի ուսանողների առնվազն 30 տոկոսի ներկայության դեպքում,

բ. երաշխավորությունը տրվում է փակ գաղտնի քվեարկությամբ,

գ. կուրսի քվեարկությանը մասնակցած ուսանողների մինչև 70 տոկոս ձայներով տրված երաշխավորության դեպքում՝ 0,3 միավոր, 70-ից 80 տոկոսի դեպքում՝ 0,5 միավոր, 80 և բարձր տոկոսի դեպքում՝ 1 միավոր:

6. Սույն հոդվածի 5-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված լրացուցիչ պահանջի բավարարման մասին տեղեկությունները ներկայացվում է ուսանողի կողմից՝ համապատասխան ֆակուլտետի դեկանատին:

Սույն հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետով նախատեսված լրացուցիչ պահանջի բավարարման մասին տեղեկությունները ներկայացնում է ֆակուլտետի դեկանատը:

Սույն հոդվածի 5-րդ մասի 4-րդ կետով նախատեսված երաշխավորման գործընթացը կազմակերպում և ամփոփում է ֆակուլտետի դեկանատը:

### ***Հոդված 3. Անվանական կրթաթոշակների չափերը***

1. Անվանական կրթաթոշակները տրամադրվում են մեկ ուսումնական տարվա համար՝ ամսական կտրվածքով, յուրաքանչյուր ամսվա համար սահմանելով հետևյալ չափերը՝

1) «Մխիթար Հերացու» անվան կրթաթոշակ՝ 50.000 դրամ,

2) «Վահան Արծրունու», «Հակոբ Հովհաննիսյանի», «Լևոն Հովհաննիսյանի», «Գրիգոր Արեշյանի», «Ռուբեն Յոլյանի», «Բարդուղիեմոս Ֆանարջյանի», «Լևոն Օրբելու», «Մերուժան Ստեփանյանի» անվան անվանական կրթաթոշակներ՝ 35.000 դրամ:

2. Անվանական կրթաթոշակները փոխանցվում են ուսանողի բանկային հաշվեհամարին:

### ***Հոդված 4. Անվանական կրթաթոշակների տրամադրման կարգը***

1. Համալսարանի ֆակուլտետների դեկանատները սույն կանոնակարգի 2-րդ հոդվածով նախատեսված պահանջները բավարարող ուսանողների տվյալները մինչև յուրաքանչյուր տարվա մայիս ամիսը տրամադրում են Համալսարանի մանդատային հանձնաժողովին՝ համապատասխանության եզրակացություն տրամադրելու նպատակով:

2. Համալսարանի մանդատային հանձնաժողովը ձայների պարզ մեծամասնությամբ ընդունում է եզրակացություն՝ ուսանողի անվանական կրթաթոշակ ստանալու պահանջներին համապատասխանելու կամ չհամապատասխանելու վերաբերյալ:

3. Ուսանողի անվանական կրթաթոշակ ստանալու պահանջներին համապատասխանելու դեպքում ուսանողի տվյալները՝ համապատասխան հիմնավորող փաստաթղթերով փոխանցվում են Համալսարանի գիտական խորհրդի քարտուղարությանը՝ գիտական խորհրդի հերթական նիստում համապատասխան որոշում կայացնելու համար:

4. Ուսանողի անվանական կրթաթոշակ ստանալու պահանջներին չհամապատասխանելու եզրակացության դեպքում, ուսանողի կրթաթոշակ տրամադրելու հարցը գիտական խորհրդում չի քննարկվում:

#### ***Հոդված 5. Անվանական այլ կրթաթոշակների սահմանումը***

Սույն կանոնակարգով չնախատեսված և Համալսարանի Գիտական խորհրդի որոշմամբ նախատեսված դեպքերում կարող են սահմանվել այլ անվանական կրթաթոշակներ և կրթաթոշակի չափեր:

\* \* \*